Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-643-01.08.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետում «Բարձրագույն դատական խորհրդի նախագահի և անդամի» բառերից հետո լրացնել «, վերաքննիչ քրեական դատարանի, վերաքննիչ քաղաքացիական դատարանի, վերաքննիչ վարչական դատարանի, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, սնանկության դատարանի և վարչական դատարանի դատավորի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում և 8-րդ հոդվածի 5-րդ մասում «Բարձրագույն դատական խորհրդի նախագահի և անդամի» բառերից հետո լրացնել «, վերաքննիչ քրեական դատարանի, վերաքննիչ քաղաքացիական դատարանի, վերաքննիչ վարչական դատարանի, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, սնանկության դատարանի և վարչական դատարանի դատավորի» բառերով:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածի 3.1-ին մասում «Դատախազին» բառից առաջ լրացնել «Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և վարչական դատարանի դատավորներին,» բառերով:

Հոդված 4. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.

«5.1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, սնանկության դատարանի և վարչական դատարանի դատավորներին սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 60 տոկոսի չափով:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին մասով.

«6.1. Վերաքննիչ քրեական դատարանի, վերաքննիչ քաղաքացիական դատարանի, վերաքննիչ վարչական դատարանի դատավորներին սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 55 տոկոսի չափով:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կ-643-01.08.2023-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետում «Բարձրագույն դատական խորհրդի նախագահի և անդամի» բառերից հետո լրացնել «**, վերաքննիչ քրեական դատարանի, վերաքննիչ քաղաքացիական դատարանի, վերաքննիչ վարչական դատարանի**, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, սնանկության դատարանի և վարչական դատարանի դատավորի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում և 8-րդ հոդվածի 5-րդ մասում «Բարձրագույն դատական խորհրդի նախագահի և անդամի» բառերից հետո լրացնել «**, վերաքննիչ քրեական դատարանի, վերաքննիչ քաղաքացիական դատարանի, վերաքննիչ վարչական դատարանի**, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, սնանկության դատարանի և վարչական դատարանի դատավորի» բառերով:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածի 3.1-ին մասում «Դատախազին» բառից առաջ լրացնել «Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և վարչական դատարանի դատավորներին,» բառերով:

Հոդված ~~3~~ 4. ~~Օրենքի 13-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ մասով.~~

Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.

«5.1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, սնանկության դատարանի և վարչական դատարանի դատավորներին սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 60 տոկոսի չափով:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին մասով.

«6.1. Վերաքննիչ քրեական դատարանի, վերաքննիչ քաղաքացիական դատարանի, վերաքննիչ վարչական դատարանի դատավորներին սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 55 տոկոսի չափով:»:

Հոդված ~~4~~ 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ (Կ-643-01.08.2023-ՊԻ-011/1) ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	***Կառավարություն***	Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ:	Դատավորների վարձատրության կարգավորումները ներդաշնակեցնելու նպատակով առաջարկվում է Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում «առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի» բառերից առաջ լրացնել «վերաքննիչ քրեական դատարանի, վերաքննիչ քաղաքացիական դատարանի, վերաքննիչ վարչական դատարանի,» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

2.	***Կառավարություն***	Նախագծի նոր 3-րդ հոդված	Դատավորների վարձատրության կարգավորումները ներդաշնակեցնելու նպատակով առաջարկվում է Նախագիծը լրացնել նոր հոդվածով (Հոդված 3), որով սահմանվում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և վարչական դատարանի դատավորներին, ինչպես ներկայումս գործող օրենքով հակակոռուպցիոն դատարանի դատավորներին, արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ չեն տրվում: Ուստի առաջարկվում է Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. «Օրենքի 8-րդ հոդվածի 3.1-ին մասում «Դատախազին» բառից	Ընդունվել է	Ընդունվել է:

			առաջ լրացնել «Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և վարչական դատարանի դատավորներին,» բառերով:»:		
3.	***Կառավարություն***	Նախագծի 3-րդ հոդված (խմբագրության արդյունքում 4-րդ հոդված)	Դատավորների վարձատրության կարգավորումները ներդաշնակեցնելու նպատակով առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածը (խմբագրության արդյունքում Հոդված 4) վերախմբագրել և լրացնել նոր կետով, որի համաձայն օրենքի 13-րդ հոդվածը լրացվում է նոր 6.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «6.1. Վերաքննիչ քրեական դատարանի, վերաքննիչ քաղաքացիական դատարանի, վերաքննիչ վարչական դատարանի դատավորներին սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝	Ընդունվել է:	Ընդունվել է:

			պաշտոնային դրույքաչափի 55 տոկոսի չափով»:		